# ԿԱՐԾԻՔ

***Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ Արթուր Սեյրանի Նահապետյանի «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրա-իրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ՝*** *ԺԲ.00.02-հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)* ***մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար***

Երևանի պետական համալսարանում գործող Բարձրագույն որակավորման կոմիտեի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի որոշմամբ կարծիքի ներկայացված Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ **Արթուր Սեյրանի Նահապետյանի** «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ *ԺԲ.00.02–հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)* մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է գիտագործնական արժեք ունեցող այնպիսի հարցադրումների համակողմանի ուսումնասիրությանը, ինչպիսիք են՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանումը, դրա բովանդակության սահմանների և այդ սահմանների տիրույթում գտնվող համապատասխան տարրերի բացահայտումը, ինչպես նաև քննարկվող իրավունքի կենսագործունեության ապահովման երաշխիքների ներկայացումը ու նշված խնդիրների հետ անմիջականորեն կապված այլ հարցադրումների պարզաբանումը:

Հեղինակին ընդհանուր առմամբ հաջողվել է ուսումնասիրության նյութ դարձնել ընտրված թեմային անմիջականորեն առնչվող որոշ հարցադրումներ: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ընտրված հարցերի հրատապությամբ և դրանց գիտագործնական նշանակությամբ:

Հեղինակի կողմից իրականացված ուսումնասիրության առանցքն են կազմել նաև ֆիզիկական և հոգեկան անձեռնխելիության իրավունքի սահմանափակման սահմանադրորեն արգելված դեպքերը, դրանցից յուրաքանչյուրի առարկայական բովանդակությունը և կենսագործման ընթացակարգային վավերապայմանները:

Ուշագրավ է, որ նշված հիմնարար բնույթի իրավական հարցադրումները ուսումնասիրության նյութ են դիտարկվել նաև առկա իրավակարգավորումների կատարելագործման համատեքստում՝ միջազգային չափանիշների հաշվառմամբ:

Բացի այդ, չնայած ատենախոսության թեման առավելապես վերաբերում է մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորումներին, սակայն Հեղինակը չի խուսափել հավելյալ արձանագրելու քննարկվող ոլորտում առկա մյուս իրավակարգավորման խնդիրները և ըստ այդմ՝ բանաձևվել այդ առնչությամբ վերջինիս դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, որոնք անշուշտ էլ ավելի են հարստացրել ատենախոսության բովանդակությունը: Ուշադրության է արժանի նաև այն, որ ատենախոսության շարադրանքում օգտագործվել են անգլալեզու հսկայական նյութեր, որոնք հասանելի են տարբեր էլեկտրոնային կայք էջերում:

Պաշտպանության ներկայացվող եզրահանգումներն ու դրույթներն ունեն որոշակի չափով բավարար ինքնատիպություն ու գիտական հիմնավորվածություն և կարող են նշանակություն ունենալ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ ինչպես տեսական մոտեցումների զարգացման, այնպես էլ ՀՀ գործող օրենսդրության համարժեք կատարելագործման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև Հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով:

Ընդ որում, ատենախոսությունը շարադրված է պատշաճ գրական հայերենով, աչքի է ընկնում նաև ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ: Հեղինակի կողմից մեծամասամբ պահպանվել են աշխատանքի ձևավորման պահանջներն, ինչի արդյունքում վրիպակներ և խմբագրական այլ թերություններ գրեթե չկան:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ աշխատանքը զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հանգում են հետևյալին:

1. Աշխատանքում անդրադառնալով ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի բովանդակությանը, դրանք քննարկելով սահմանադրաիրավական ասպեկտով՝ Հեղինակն առհասարակ անդրադարձ չի կատարել այդ առնչությամբ

Մարդու իրավունքների պաշտպանի որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ինչպես տարեկան հաղորդումներին, այնպես էլ՝ հոգեկան առողջության հաստատություններում մշտադիտարկման արդյունքներն ամփոփող զեկույցներին, որոնք միանշանակ աշխատանքին հավելյալ գիտագործնական հենք կհաղորդեին՝ նաև որոշակի պատկերացում տալով ՀՀ-ում ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի կենսագործունեության երաշխավորման արդի վիճակի վերաբերյալ:

Որպես մեկ օրինակ՝ «Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Պաշտպանի՝ 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցի համաձայն. «(...) Սևանի հոգեբուժական հիվանդանոց իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ այնտեղ պահվող անձի նկատմամբ կիրառված է եղել անվտանգության միջոց՝ անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը: Վերջինիս հիվանդության պատմագրի համաձայն՝ անձը բուժում ստանալու համաձայնություն չի ներկայացրել, իրեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող չի համարել, և նույնիսկ դիմել է փախուստի, սակայն նույն օրը վերադարձվել է հաստատություն: Անվտանգության միջոցը կիրառելու վերաբերյալ քննիչի միջնորդությանը բավարարելու մասին դատարանի որոշմամբ առհասարակ անդրադարձ չի կատարվել անձի նկատմամբ բուժում իրականացնելու հարցին, այնուամենայնիվ, պացիենտի հիվանդության պատմագրի համաձայն՝ նրան նշանակված է եղել դեղորայքային բուժում «Տրիֆտազին», «Հալոպերիդոլ», «Ցիկլոդոլ» և «Ազալեպտին» դեղամիջոցներով, որոնք վերջինս ստացել է հոգեբուժական կազմակերպությունում:

Ստացվում է, որ անձի նկատմամբ իրականացվել է հարկադիր բուժում, այսինքն՝ բուժում առանց նրա իրազեկված համաձայնության և (կամ) դատարանի համապատասխան ակտի, ինչը չափազանց խնդրահարույց է: (...) Արդյունքում, դատական ակտում չնշված, սակայն գործնականում իրականացվող բուժման առնչությամբ պետք է քննարկել անձի բուժման համաձայնության հարցը, քանի որ հարկադրանքը ոչ միշտ է, որ վերաբերում է հենց բուժմանը:»:

2. Հեղինակն աշխատանքում ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի իրացման երաշխիքների ապահովման պետության պարտականության լույսի ներքո անդրադարձել է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքին: Կարծում ենք, որ նշված իրավունքի երաշխավորման տեսանկյունից առավել

ռիսկային խմբում են գտնվում պայմանականորեն «փակ» հաստատություններում՝ հոգեկան առողջության կենտրոններում, ձերբակալված անձանց պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք:

Ուստի, աշխատանքն ակնհայտորեն կշահեր, եթե վերոնշյալ անձանց՝ խնդրո առարկա սահմանադրական իրավունքի երաշխավորմանն առնչվող նյութի շրջանակում Հեղինակն անդրադառնար նաև նրանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացման հիմնախնդիրներին՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության՝ 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ նախատեսված համապատասխան իրավական կառուցակարգերի վերլուծության համատեքստում:

3. Աշխատանքում Հեղինակը, ըստ էության, ազատորեն և սեփական կամքին համապատասխան իր սեռական կյանքը տնօրինելու իրավունքը դիտարկում է որպես ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի բաղադրիչ: Արդի իրողությունների համատեքստում տիպական կլիներ, եթե Հեղինակը լրացուցիչ դիրքորոշում հայտներ այն հարցի առնչությամբ, թե արդյոք իր սեռական կյանքը տնօրինելու իրավունքի բովանդակության ներքո Հեղինակի դիտարկմամբ կարող է ներառվել նաև սեփական սեռն ինքնուրույն որոշելը, և ըստ այդմ, սեփական սեռական կյանքը տնօրինելը: Ընդ որում, աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե նշված հարցադրման համատեքստում քննարկեր նաև մեր հասարակության վերաբերմունքն այդ հարցերի նկատմամբ, ինչու չէ նաև ազգային որոշ առանձնահատկությունները:

4. Աշխատանքում կան նաև բացառապես տեխնիկական բնույթի որոշ թերություններ, մասնավորապես՝ գրականության ցանկում որպես օրենսդրական աղբյուր նշված չէ աշխատանքի տեքստում արտացոլված և առանձին հղմամբ ներկայացված 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ գործող քրեական օրենսգիրքը:

Չնայած հիշյալ դատողություններին՝ դրանք ամենևին չեն ստվերում աշխատանքում արված վերլուծությունների և եզրահանգումների գիտական արժեքը, չեն հավակնում կասկածի տակ դնելու ատենախոսություններին ներկայացվող պահանջներին սույն աշխատության համապատասխանության փաստը:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ կարծիքի ներկայացված ատենախոսությունը բավարարում է համանման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Այսպիսով, ամփոփելով Արթուր Սեյրանի Նահապետյանի «Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ *ԺԲ.00.02 – հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)* մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեկնածուական թեզի վերաբերյալ մեր նկատառումները, կարող ենք արձանագրել, որ այն համապատասխանում է սահմանված պահանջներին, իսկ Արթուր Նահապետյանն արժանի է հայցվող մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

***ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՄ՝***

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ,**
**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆԻ ԴՈՑԵՆՏ,**
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ՝**

**ՌՈՒՍՏԱՄ ՄԱԽՄՈՒԴՅԱՆ**

**12-ը մայիսի 2023թ.**
**ք. Երևան**

ԵՊՀ դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
Ռուստամ Մախմուդյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ**
**ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ**
**ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ**